ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№__1474-Ա____ « 19 » ապրիլի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՍՈՖԻԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանրային տրանսպորտի միասնական տոմսային համակարգի ներդրման հետ կապված փորձի ուսումնասիրման նպատակով և ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը 2024 թվականի ապրիլի 23-ից 27-ը գործուղել Բուլղարիայի Հանրապետության մայրաքաղաք Սոֆիա, հետևյալ կազմով.

Սուրեն Գրիգորյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Վազգեն Հարությունյան	Աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
Սարգիս Մանուկյան	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

2. Ընդունել ի գիտություն, որ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանի և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժ/պ Վազգեն Հարությունյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի միջոցների հաշվին, իսկ «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Սարգիս Մանուկյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Ընկերության 2024 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3.Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանի բացակայության ընթացքում քաղաքապետի տեղակալի պարտականությունները վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանին:

4.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժ/պ Վազգեն Հարությունյանի բացակայության ընթացքում վարչության պետի պարտականությունները վերապահել նույն վարչության հասարակական տրանսպորտի կարգավորման բաժնի պետ Հարություն Մելքումյանին:

5. Ընկերության տնօրեն Սարգիս Մանուկյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունները վերապահել նույն Ընկերության տնօրենի տեղակալ Արսեն Ներսիսյանին:

6. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ